Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 26.07.2022 թվականի որոշման
Գործում է 28.07.2022 թվականից

«ABB Աշխատավարձ» և «ABB Աշխատավարձ +»

Տեղեկատվական ամփոփագիր

Գրանցված զուտ աշխատավարձի և դրան հավասարեցված պարտադիր վճարների հիման վրա ֆիզիկական անձանց տրամադրվող կրեդիտի և վարկային գծի պայմաններն ու սակագները

1	Կրեդիտի/ Վարկային գծի հիմնական պայմաններ		
1.1	Վարկի ձևակերպման վայր	Բանկի մասնաճյուղեր/ Գլխամասային գրասենյակ	
1.2	Հաճախորդի նպատակային խումբ	Ֆիզիկական անձինք, ովքեր ունեն կանոնավոր եկամուտ/հավաստող փաստաթղթեր՝տեղեկանք աշխատավայրից, քաղվածք, համաձանագրեր, պայմանագրեր / և համապատասխանում են 5.2 կետում նշված որևէ սեգմենտին[1]	
1.3	Արժույթ	ՀՀ դրամ	
1.4	Վարկի տեսակը	● Կրեդիտ ● Մասնակի վերականգնվող վարկային գիծ	● Վերականգնվող վարկային գիծ
1.5	Տարեկան անվանական տոկոսադրույք[2]	● 14.5%՝ A սեգմենտի դեպքում ● 15%՝ B սեգմենտի դեպքում ● 15.5%՝ C սեգմենտի դեպքում ● 16%՝ D սեգմենտի դեպքում ● 16.5%՝ E սեգմենտի դեպքում	19.5%
1.6	Տարեկան փաստացի տոկոսադրույք	15.7-23.1%	
1.7	Տոկոսադրույքի տեսակը	Ֆիքսված	
1.8	Ժամկետ	● Կրեդիտ 6-60 ամիս ● Մասնակի վերականգնվող վարկային գիծ՝ 6-36 ամիս	6-36 ամիս
1.9	Տոկոսագումարների հաշվարկման կարգ	● Կրեդիտի դեպքում տոկոսագումարի հաշվարկը կատարվում է կրեդիտի նվազող մնացորդի նկատմամբ՝օրական կտրվածքով ● Վարկային գծի դեպքում՝ տոկոսադրույքը կիրառվում է վարկային գծի օգտագործված մասի նկատմամբ, չօգտագործված մասի նկատմամբ տոկոսադրույքը սահմանվում է՝ 0 %	
1.10	Մարման եղանակ	● Կրեդիտի դեպքում՝ - կրեդիտի գումարի և հաշվեգրված տոկոսների ամենամսյա հավասարաչափ մարում/անուիտետ/ - Կրեդիտի գումարի ամենամսյա հավասարաչափ մարում և հաշվեգրված տոկոսների	● Վերականգնվող վարկային գծի դեպքում՝ ամենամսյա պարտադիր մուտք վարկային գծի հաշվին՝ նախորդ ամսվա վերջին օրվա դրությամբ օգտագործված վարկային գծի նվազագույնը 10%-ի չափով և հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում

[1] Աշխատավարձային նախագծի առկայության դեպքում՝ կրեդիտի և վարկային գծի պայմանները սահմանվում են Բանկի հետ կնքված համագործակցության պայմանագրով՝ եթե Բանկի իրավասու մարմնի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

[2] - Եթե վարկառուն 3 ամիս անընդմեջ աշխատավարձը ստանում է Հայբիզնեսբանկ ՓԲԸ- ի վճարային քարտերով, սակայն կազմակերպության հետ առկա չէ աշխատավարձայնի նախագիծ, ապա կատարվում է վարկի պայմանների վերանայում՝ մասնավորապես 1.5 կետում նշված անվանական տոկոսադրույքների նվազում 0.5 տոկոսային կետով:/Վերոնշյալ պայմանի վերանայումը կատարվում է անվճար/

- Եթե հաճախորդը Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի վճարային քարտերով արդեն իսկ 3 ամիս և ավել պարբերականությամբ ստանում է աշխատավարձ, սակայն կազմակերպության հետ առկա չէ աշխատավարձային նախագիծ, ապա նոր վարկը դիտարկվում է սույն ամփոփագրի 1.5 կետում նշված անվանական տոկոսադրույքներից 0.5 տոկոսային կետով ցածր:

		մարում/զսպանակաձև/ ● Մասնակի վերականգնվող վարկային գծի դեպքում՝ վարկային գծի սահմանաչափի ամենամսյա հավասարաչափ նվազեցում/մարում և հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում	
1.11	Վարկի նվազագույն գումար	200.000 ՀՀ դրամ	
1.12	Վարկի առավելագույն գումար	Համաձայն սույն պայմանների 5.4 կետի, բայց ոչ ավել քան 10.000.000 ՀՀ դրամ	
1.13	Կրեդիտի/Վարկային գծի տրամադրման համար պարտադիր պայմաններ	Անհրաժեշտ է ներկայցնել աշխատավարձը և/կամ դրան հավասարեցված պարտադիր վճարները հաստատող փաստաթուղթ/եր/տեղեկանք աշխատավայրից և/կամ 6 ամսվա բանկային քաղվածք, համաձանագրեր, պայմանագրեր և այլ փաստաթղթեր ըստ անհրաժեշտության /[3]	
1.14	Վարկի տրամադրման եղանակ	● Կրեդիտը տրամադրվում է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ–ում հաճախորդի կողմից բացված բանկային հաշվին կամ դեբետային քարտի քարտային հաշվին անկանխիկ փոխանցման միջոցով. ● Վարկային գիծը տրամադրվում է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից թողարկված հաճախորդի վճարային քարտի քարտային հաշվին անկանխիկ փոխանցման միջոցով	
1.15	Վաղաժամկետ մարում	Վաղաժամկետ մարման տույժ չի սահմանվում	
1.16	Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ	1 աշխատանքային օր	
1.17	Վարկի տրամադրման մասին դրական որոշման գործողության առավելագույն ժամկետ	Վարկի տրամադրման դրական որոշման կայացման օրվանից 15 օրացույցային օր	
1.18	Վարկառուին վարկի տրամադրման ժամկետ	Վարկային պայմանագրերը ստորագրելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում	
2	**Բանկի միջնորդավճարներ**		
2.1	Հայտի ուսումնասիրության վճար	չի սահմանվում	
2.2	Կրեդիտի/ Վարկային գծի տրանադրման միանվագ միջնորդավճար	0.4% վարկի սկզբնական գումարից	
2.3	Կրեդիտի/ Վարկային գծի սպասարկամն ամսական միջնորդավճար	չի սահմանվում	
2.4	Կրեդիտի միջոցների կանխիկացում	չի սահմանվում	
2.5	Վարկային գծի միջոցների կանխիկացում	Համաձայն բանկում գործող ծառայությունների սակագներով տվյալ տեսակի վճարային քարտի համար սահմանված սակագների կամ աշխատավարձային քարտի սակագների	

[3] Աշխատավարձայնի նախագծի առկայության դեպքում՝
- Բավական է Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի պլաստիկ քարտին առնվազն մեկ ամսվա աշխատավարձի մուտք

2.6	Վարկառուի կողմից պարտավորությունները չկատարելու դեպքում տույժեր	● Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով ● Կրեդիտը/Վարկային գիծը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով ● Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ 1. Տույժ/տուգանքներ 2. Տոկոսագումարներ 3. Մայր գումար
		ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՋ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:
2.7	Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում	Համաձայն բանկում գործող սակագների
2.8	Վարկի պայմանների վերանայում	Վարկի մնացորդի 0.2%, նվազագույնը՝ 5000 ՀՀ դրամ
2.9	Հաճախորդի այլ ծախսեր	չի սահմանվում
3	**Ապահովություն**	
3.1	Ապահովություն	Եկամտի ստացման իրավունք և/կամ Քարտային հաշվից բխող դրամական պահանջի իրավունքի գրավ /Սահմանված դեպքերում նաև երաշխավորություն/
4	**Վարկառուի/ երաշխավորի նկատմամբ հիմնական պահանջներ**	
4.1	Վարկառուի/ երաշխավորի եկամուտները	Աշխատավարձ և/կամ դրան հավասարեցված պարտադիր վճարներ
4.2	Կարգավիճակ	● ՀՀ-ում և ԱՀ-ում հաշվառված ֆիզիկական անձինք, ովքեր ունեն անձը հաստատող փաստաթղթում նշված մշտական գրանցման և/կամ փաստացի բնակության հասցե ● Վարկառուն վերջին աշխատավայրում առնվազն 3/երեք/ ամիս պետք է հանդիսանա կազմակերպության աշխատակից
4.3	Տարիք	Վարկային հայտը ներկայացնելու պահին Վարկառուի տարիքը պետք է լինի նվազագույնը՝ 18 տարեկան, իսկ վարկի մարման պահին չպետք է գերազանցի 63 տարեկանը
4.4	Վարկառուի/երաշխավորի վարկային պատմության հանդեպ պահանջներ	Վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր (մարված և գործող) վարկերի ժամկետանց օրերի ընդհանուր հանրագումարը չպետք է գերազանցի 36 օրացուցային օրը, ընդ որում մեկ ամսվա ուշացումների քանակը չպետք է գերազանցի 6 օրացուցային օրը: Վարկառուի/երաշխավորի գործող երաշխավորությունների դասը՝ ստանդարտ:
4.5	Երաշխավոր	• 18-63 տարեկան ռեզիդենտ ֆիզիկական անձ, • Գրանցման առկայություն ՀՀ-ում կամ ԱՀ-ում, • Վարկառուի ընտանիքի անդամ (հայր, մայր, քույր, եղբայր, ամուսին, երեխա) չհանդիսացող Վարկառուի հետ համապարտ պատասխանատվություն կրող անձ, ով պարտավորվում է պատասխանատվություն կրել վարկառուի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար և որի պարտավորությունը ծագում է այն դեպքում, երբ վարկառուն չի կատարում կամ մասնակի է կատարում իր պարտավորությունը: • Կրեդիտի/Վարկային գծի տրամադրման որոշումը կայացնելու պահին Երաշխավորի այլ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված բոլոր

		բանկերում և վարկային կազմակերպություններում գործող երաշխավորությունների և սույն պայմանների համաձայն նոր տրամադրվող երաշխավորության պայմանագրերի հանրագումարը(հաշվրկի մեջ ներառվող պարտավորությունների գումարները վարկերի դեպքում ներառվում են վարկի մնացորդի չափով, իսկ վարկային գծի/օվերդրաֆտի դեպքում՝ պայմանագրային գումարից և մնացորգդային գումարից/սահմանաչափից առավելագույնով) չպետք է գերազանցի 10,000,000 ՀՀ դրամ գումարը և երաշխավորությունների պայմանագրերի քանակը չպետք է գերազանցի 3 հատը (ընդ որում Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ում “ABB–ԱՇԽԱՏԱՎԱՐՁ” և “ABB–ԱՇԽԱՏԱՎԱՐՁ+” վարկատեսակների շրջանակներում նույն անձի պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխավորությունները, անկախ պայմանագրերի քանակից համարվում են մեկ հատ):
5	**Լրացուցիչ պայմաններ**	
5.1	Դիմում-հայտի մերժման պատճառներ	● Հաճախորդի կողմից չեն ներկայացվել Կրեդիտ/Վարկային գիծ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ● Հաճախորդը չի բավարարում Բանկի նվազագույն պայմաններին/պահանջներին ● Հաճախորդի անունով բոլոր բանկերում և վարկային կազմակերպություններում առանց գույքի գրավի, ապառիկի (ֆակտորինգի) և իրավունքի գրավի ապահովվածությամբ գործող և սույն պայմանների համաձայն նոր տրամադրվող վարկերի/վարկային գծերի մնացորդների/սահմանաչափերի հանրագումարը չպետք է գերազանցի վերջին 6 ամսվա ընթացքում ստացված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների միջին ամսական մեծության 15ապատիկը ● Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ հաճախորդը վարկունակ չէ ● ՀՀ ԿԲ Վարկային ռեգիստր և/կամ ԱՔՌԱ վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որը Հաճախորդը ունի բացասական վարկային պատմություն: ● Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի է դարձել Հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկությունը կամ Կրեդիտի/Վարկային գծի վերադարձելիությունը:
5.2	Գործատու կազմակերպությունների ըստ ոլորտների սեգմենտավորում[4]	Համաձայն՝ Հավելված Սեգմենտավորում
5.3	Այլ պայմաններ	Եթե Հաճախորդը ցանկանում է Կրեդիտ/Վարկային գիծ ստանալ ընդհանուր երկու և ավել կազմակերպություններից ստացված աշխատավարձային վճարումների մասով, և կազմակերպությունների հետ կնքված համագործակցության պայմանագրերի շրջանակներում վարկավորման պայմանները տարբերվում են կամ հաճախորդը բավարաարում է 5.2 կետի պահանջներին,սակայն չկա համագործակցության պայմանագիր, ապա Կրեդիտի/Վարկային գծի տոկոսադրույքը սահմանվում է առավելագույն տոկոսադրույքով, իսկ մնացած պայմանները համաձայն տվյալ տոկոսադրույքի համար սահմանված պայմանների: • Վարկառուին անկախ Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ում ունեցած աշխատավարձային քարտի առկայությունից, կարող է տրամադրվել թվով մեկ վարկային գիծ և անսահմանափակ թվով Կրեդիտներ: Վարկառուին տրամադրված Կրեդիտների և Վարկային գծերի հանրագումարը չպետք է գերազանցի սույն պայմանների 1.12 կետով սահմանված առավելագույն գումարը:

[4] Անկախ գործատու կազմակերպության կազմակերպաիրավական տեսակից և ենթակայությունից,եթե կազմակերպությունը բավարարում է մեկից ավել սեգմենտների պահանջներին/պայմաններին, ապա վարկավորման ժամանակ նախապատվությունը տրվում է առավել ցածր սեգմենտի պայմաններին: Բացառություն են կազմում՝ համաձայն սեգմենտաորման հավելվածի՝ D9 սեգմենտի կազմակերպությունները, որոնք միաժամանակ բավարարելով և D9 սեգմենտի պահանջին, և A-C սեգմենտներից որևէ մեկին, արդյունքում վարկավորման պայմանները սահմանվում են առավել բարենպաստ սեգմենտի պայմաններին համապատասխան:

5.4	Վարկային սահմանաչափեր՝ ըստ սեգմենտների ԱՀ ռեզիդենտ քաղաքացիներին տրամադրվող կրեդիտի/վարկային գծի առավելագույն սահմանաչափը սահմանված է 1.000.000 ՀՀ դրամ:	
Սեգմենտ	**Վարկատեսակ**	
	Կրեդիտ/ մասնակի վերականգնվող վարկային գիծ	Վերականգնվող վարկային գիծ
A	Միջին եկամտի 10-ապատիկը, բայց ոչ ավել քան 10.000.000 ՀՀ դրամը	Միջին եկամտի*6-ապատիկի չափով
	Մեկ երաշխավորի առկայության դեպքում՝ միջին եկամտի 15-ապատիկը, բայց ոչ ավել քան 10.000.000 ՀՀ դրամը	
B	Միջին եկամտի 10-ապատիկը, բայց ոչ ավել քան 8.000.000 ՀՀ դրամը	
	Մեկ երաշխավորի առկայության դեպքում՝ միջին եկամտի 15-ապատիկը, բայց ոչ ավել քան 8.000.000 ՀՀ դրամը	
C	Միջին եկամտի 10-ապատիկը, բայց ոչ ավել քան 6.000.000 ՀՀ դրամը	Միջին եկամտի 3* -ապատիկի չափով
	Մեկ երաշխավորի առկայության դեպքում՝ միջին եկամտի 15-ապատիկը, բայց ոչ ավել քան 6.000.000 ՀՀ դրամը	
D	Միջին եկամտի 10-ապատիկը, բայց ոչ ավել քան 5.000.000 ՀՀ դրամը	
	Մեկ երաշխավորի առկայության դեպքում՝ միջին եկամտի 15-ապատիկը, բայց ոչ ավել քան 5.000.000 ՀՀ դրամը	
E	Միջին եկամտի 10-ապատիկը, բայց ոչ ավել քան 3.000.000 ՀՀ դրամը	
	Մեկ երաշխավորի առկայության դեպքում՝ միջին եկամտի 15-ապատիկը, բայց ոչ ավել քան 3.000.000 ՀՀ դրամը	

* Վերջին 6** ամսվա ընթացքում ստացված զուտ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների միջին ամսական մեծություն:

**Եթե վերջին 6 ամիսների ընթացքում աշխատանքային փորձը փոքր է 6 ամսից, բայց գերազանցում է 3 ամիսը, ապա աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների միջին ամսական մեծության հաշվարկի համար համապատասխան ամիսների ընթացքում ստացված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների ընդհանուր գումարը բաժանվում է 6-ի:

Ուշադրություն՝

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի քարտով աշխատավարձի ստացումը 6 ամսից պակաս լինելու դեպքում՝ միջին եկամտի հաշվարկման համար հիմք են ընդունվում հետևյալ մեծությունները՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի քարտով փաստացի ստացված մեծության հարաբերակցությունը համապատասխան ամիսներին և մնացած ամիսների համար՝ այլ բանկերի քաղվածքներում կամ տեղեկանքում նշված մեծությունը:

Կրեդիտի/Վարկային գծի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	Հաճախորդից պահանջվող	Երաշխավորից պահանջվող
Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ)	✓	✓
Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից (նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում չի պահանջվում)	✓	✓
• Բանկային քաղվածք աշխատավարձային քարտային հաշվից՝ նվազագույնը վերջին 6 ամսվա կտրվածքով • Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի քարտով աշխատավարձի ստացումը 6 ամսից պակաս լինելու դեպքում՝	✓	✓

ներկայացվում է նաև այլ բանկում նախկինում սպասարկված աշխատավարձային քարտային հաշվի քաղվածքը կամ • եթե հաճախորդը վերջին 6 ամիսների ընթացքում աշխատավարձը չի ստացել բանկային քարտով, ապա ներկայացնում է զբաղվածության և եկամուտների մասին տեղեկանք՝ գործատուի պաշտոնական բլանկի վրա տպված, որտեղ նկարագրված կլինի տվյալ ընկերությունում զբաղեցրած պաշտոնի, աշխատանքային ստաժի, ինչպես նաև վերջին 6 ամիսների ընթացքում փաստացի ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն		
Այլ փաստաթղթեր ըստ անհրաժեշտության	✓	✓

Տեղեկատվություն երաշխավորների համար.

- Եթե վարկառուն չկատարի պարտավորությունները, ապա Դուք եք վճարելու իր փոխարեն, վատանալու է Ձեր վարկային պատմությունը և զրկվելու եք Ձեր գույքից:
- Ձեզ տրամադրվելու է վարկային, երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ:
- Հաղորդակցումը իրականացվելու է Ձեր կողմից ընտրված եղանակով:
- 7 օր առաջ ծանուցվելու եք պայմանագրի պայմանների փոփոխության մասին:
- 1 օր առաջ հիշեցում է ուղարկվելու առկա պարտավորության վերաբերյալ:
- Վարկի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո, Ձեզ տեղեկացնելու են այդ մասին:

Երաշխավորն իրավունք ունի.

- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:
- Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն բանկում գործող ծառայությունների սակագների:

<u>Զգուշացում՝</u>

Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք չկատարեք կամ ոչ պատշաճ կատարեք վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

<u>Ուշադրություն՝</u>

ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՁԵԶ ԵՐԱՇԽԱՎՈՐ(ՆԵՐ)ԻՆ (առկայության դեպքում) ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ. ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

<u>Ուշադրություն՝</u>

ԿՐԵԴԻՏԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՉԻԿԱՐՈՂ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ ՀՀԿ ԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍԱՀՄԱՆԱԾ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԻ ԿՐԿՆԱՊԱՏԻԿԸ:

Ուշադրություն՝

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:
ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է՝ ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱՆԱՁԵՎԸ.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR)
A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը)
n – կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը
N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը
Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը
Dn-կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով
i –ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ՝

- Կրեդիտի գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
- Ժամկետ՝ 24 ամիս
- Տարեկան տոկոսադրույք՝ 15%
- Մարման տեսակ՝ անուիտետային

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է՝ 16,1%

Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վանկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից:

Բանկը կարող է միակողմանիորեն փոփոխել պայմանագրով սահմանված տոկոսադրույքը՝ այդ մասին առնվազն 7 օրացուցային օր առաջ ծանուցելով Վարկառուին՝ վարկը նպատակային չօգտագործելու, ինչպես նաև վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունները չիրականացնելու դեպքում:

Ուշադրություն՝

ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

Ուշադրություն՝

ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

Ուշադրություն՝

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Ֆինանսական տեղեկատու՝ www.fininfo.am

Ուշադրություն՝

«ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է: